որ բանտ՝ զի երկին եւ երկիր ինձ բանտ տեսանի կո-
բուսեալ զաստղն ի առաւօտեան։ Զմոխիր որպէս զհաց
կերի եւ զը[մ]պելին իմ արտասուօք խառնեցի։

Բաւ է պերճացելոյդ ի գիտութիւն, հերիք է ճո-
խացելոյդ յիմաստութիւն։ Ես այլ ծերացայ. քանի
մի գիրք կայ, թէ կամիս քո յիշատակդ լինիլ՝ ատամ
ուղարկեմ, ի քո անունդ արա՛։ Ողջ լե՛ր։

(Ձեռ. Թիւ 1058, թղ. 39բ–40բ)

(Վասն մահուան որդւոյն)

Տեառն վարդապետի սրբազանի . . .։

Դառնագոյն կսկծանս սրտիս ոչ արգել աստանօր
դղրդմամբ անձինս դրդելով ի սէր մեծարեալ սիրե-
լոյդ եւ քոյայնոց պատուելի հէմիշինաց ի սրբազան
ժողովդ պատահելոց, իբր բողոք դանկատի զպատա-
հումն թշուառութեան տառապելոյս, որպէս այն՝ որ ի
պտոյտս ջուրց անկեալ եւ աղաղակէ, եւ որպէս զոք՝
որ զօձ նետաձիգ տեսեալ զբողոք տարածէ, եւ որպէս
զծննդական ի ցաւ խստութեան զձիչ բարձրացուցա-
նէ, եւ այսց նման բազում օրինակաւ իբրու դեղ ինն
հնարուց յուսոյ կարծեօք տաղտապի, ակն ունելով՝
թէ ոք տրտմեսցի ընդ իս, եւ Ոչ ոք էր եւ մխիթարիչ
ինձ ոչ ոք գտաւ, եւ թէ Կորեաւ յինէն փախուստ իմ
եւ ոչ գտաւ խնդրօղ անձին իմոյ։ Զի նետ նորա հա-
րան յիս եւ փայլակնանման սուսերն սրեալ՝ ի խնդիր
վրիժուց արձակեալ աջն նորա գոլ կարծելի ըստ ա-
մենայն մեղաց իմոց։ Իսկ ըստ պատշաճին որ ըստ
յուսոյ իմոյ դոյզն կարամուտ ոչ հասանելոյ աղագին,